



Ավետիք Իսահակյան

Կովկասի հայոց հրատարակչական ընկերությանը,
1913թ. , հուլիսի 11, Կոլլոնժ

Հարգելի պարոններ.

Շնորհակալությամբ ստացել եմ «Պանի» հոնորարը լրիվ, սակայն գոնե մի նամակ չգրեցիք թարգմանության մասին:

Գրել էի նույնպես, որ նոր թարգմանական գործեր հանձնարարեք ինձ թարգմանելու. դրան էլ չպատասխանեցիք. չգիտեմ, ի՞նչ անեմ, որ հարկ համարեք պատասխանելու: Անշուշտ կարող էիք մի երկու տող գրել:

Ուրիշ բան չեմ կարող ենթադրել, - միայն ծուլություն:

Մրանով առաջարկում եմ հարգելի ընկերությանդ հետևյալը. Բյուրգերի՝ «Բարոն Մյանխհաուզենի արկածները», գերմաներենից. համաշխարհային հռչակ ունի, իբրև հանճարեղ գործ փոքրերի և մեծերի համար, կլինի մոտ 200 էրես:

Անդերսենի հեքիաթները ամբողջ գերմաներենից, նույն-պես կլինի մոտ 6 - 700 էրես:

Մերվանտեսի. «Դոն Բիշոտ Լամանչեցի» ֆրանսերենից, մոտ 8 – 900 էրես:

Այս երեք գործերն էլ մշտական արժեք կունենան հայ գրականության մեջ, շ. շ. Ընկերությանը, խոսք չկա, որ պատիվ կբերեն:

Եթե սրանցից մեկնումեկի վրա գոնե առայժմ համաձայնություն կարողանաք կայացնել, խնդրում եմ, ինձ անմիջապես հայտնեք, որ ձեռնարկեմ գործին:

Պայմանների մասին էլ, հարկավ, կգրեք, սակայն այդ երկրորդականն է:

Եթե վերջին երկուսը կախված է նյութական, համեմա-տաբար մեծ գումարի հետ, առաջինը, «Մյունխհաուզենը», ընկերության սովորական գրքերի շարքիցն է:

Հարգանքներով և բարևներով,
Ձեր՝ Ավետիք Իսահակյան